Հավելված 2
2026 թվականի հունվարի « 10 » - ի
N 27- Լ հրամանի
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՂԵԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է Միասնական սոցիալական ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, ով ակցեպտավորել է Պատվիրատուի պաշտոնական http://www.socservice.am/ կայքում տեղադրված օֆերտան (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1955-Լ որոշման հավելվածով հաստատված՝ Ղարաբաղից տեղահանված անձանց ինքնազբաղվածության խթանման ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ընգրկված շահառուների համար բիզնեսի ուսուցման և ուղեկցման ծառայություններ մատուցելու ցանկություն հայտնած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ կազմակերպություն) և Պատվիրատուի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 29-րդ և 30-րդ գլուխների հոդվածների պահանջներին համապատասխան Պատվիրատուի կողմից հրապարակված հրապարակային օֆերտայի հիման վրա կնքված սույն պայմանագրով:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

2.1. Պայմանագրի առարկան է՝ Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված պայմաններով **բիզնեսի ուսուցման և ուղեկցման ծառայություններ** մատուցելը՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից Ծրագրով սահմանված ընթացակարգով առաջարկված ցուցակից ընտրված՝ Ղարաբաղից տեղահանված անձանց (այսուհետ՝ շահառու):

2.2. Սույն պայմանագրի իմաստով Կատարողի կողմից մատուցվող ծառայությունները ներառում են՝

1) շահառուների ընտրություն (տարածքային կենտրոնից շահառուների ցուցակը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում)՝ հիմք ընդունելով

նրանց ձեռնարկատիրական գործունեության իրական հնարավորություններն ու կարողությունը,

2) բիզնես ուսուցման դասընթացների կազմակերպում մինչև 3 ամիս ժամկետով, որի արդյունքում մշակվում են գործարար ծրագրեր,

3) գործարար ծրագրերին եզրակացություն տալը՝ առաջնահերթություն տալով մշակող արդյունաբերության, գյուղատնտեսական մթերքի վերամշակման և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում գործունեության իրականացում նախատեսող գործարար ծրագրերին (դրական եզրակացություն ստացած գործարար ծրագրերը դասընթացի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տարածքային կենտրոն),

4) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ուղեկցում 12 ամիս ժամկետով, մասնավորապես՝ տնտեսական գործունեության իրականացման ընթացքում ծագած դժվարությունները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում՝ հարկային պարտավորությունների և այլ պետական վճարների կատարման, բիզնեսի կառավարման, մարքեթինգի, արտադրանքի (արդյունքի) փաթեթավորման, առաքման, վճարման կամ այլ նորարարության հարցերով, այդ թվում՝ թվային ու արհեստական բանականության գործիքների ինտեգրման վերաբերյալ:

3. ՕՖԵՐՏԱՅԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ (ԱԿՑԵՊՏԻ) ԿԱՐԳԸ

3.1. Սույն Օֆերտան ընդունելու համար Կատարողը պարտավոր է համապատասխանել հետևյալ պահանջներին.

1) գրանցված լինել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում,

2) ունենալ բիզնես դասընթացներ կազմակերպելու և բիզնես ուղեկցում իրականացնելու առնվազն 3 տարվա փորձառություն,

3) ունենալ համապատասխան մասնագիտական թիմ կամ մասնագետներ Պայմանագրի 2.2-րդ կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար,

4) Պայմանագրի 3.2-րդ կետով նախատեսված դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ չունենալ չկատարված հարկային կամ այլ պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

3.2.Կազմակերպությունը Պայմանագրին կից ձևի դիմումով (ակցեպտով) դիմում է Պատվիրատուին, որով հավաստում է սույն օֆերտային ակցեպտ (դիմում) ներկայացնելու պայմանները և Պայմանագրի պայմաններն ամբողջությամբ և անվերապահորեն ընդունելու և Ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունները սույն Պայմանագրի դրույթներին համապատասխան մատուցելու մասին իր համաձայնությունը:

3.3. Պայմանագիրը համարվում է կնքված՝ կազմակերպությանը Ծրագրի շրջանակում շահառուներին ծառայություններ մատուցող կազմակերպությունների

ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ներառելու օրվանից, որը հրապարակվում է Պատվիրատուի պաշտոնական կայքում: Կազմակերպության դիմումը Պատվիրատուի մոտ մուտքագրվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում չմերժվելու դեպքում կազմակերպությունը համարվում է ներառված Ցանկում, բացառությամբ այն դեպքերի, երբ սպառվել են Ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները կամ e-work.am հարթակում առկա չեն Ծրագրում ընդգրկվելու ցանկության վերաբերյալ նշում կատարած անձինք:

3.4. Կազմակերպությունը Ցանկում ներառվում է նվազագույնը 1 տարի ժամկետով և կարող է ներկայացնել դրանից դուրս գալու դիմում առնվազն 1 տարի հետո: Կազմակերպությունը համարվում է Ցանկից դուրս եկած՝ դիմումը Պատվիրատուի մոտ մուտքագրվելուն հաջորդող 10-րդ աշխատանքային օրվանից:

4.ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄԸ

4.1. Ծրագրի շրջանակում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Ծրագրով սահմանված չափերով, պայմաններով և ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական ցուցանիշի սահմանաչափն է:

4.2. Վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ գումարը Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1.Կատարողն իրավունք ունի.

5.1.1. պահանջել Պատվիրատուից ծրագրով նախատեսված ժամկետներում ներկայացնելու շահառուների ցուցակը, բացառությամբ այն դեպքերի, երբ սպառվել են Ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները կամ e-work.am հարթակում առկա չեն Ծրագրում ընդգրկվելու ցանկության վերաբերյալ նշում կատարած անձինք,

5.1.2. պահանջել Պատվիրատուից ծրագրով սահմանված չափերով, պայմաններով և ժամկետներում վճարելու ֆինանսական միջոցներ սույն պայմանագրի շրջանակներում իր մատուցած ծառայությունների դիմաց,

5.1.3. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր և հիմնավորումներ ներկայացնելու միջոցով,

5.1.4. միակողմանի լուծել Պայմանագիրը՝

5.1.4.1. եթե Պատվիրատուն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները,

5.1.4.2. հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

5.1.5. օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

5.2. Կատարողը պարտավոր է.

5.2.1. մատուցել սույն պայմանագրի 2.2-րդ կետով նախատեսված ծառայությունները պատշաճ որակով՝ ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան,

5.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա ավարտը Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն հաշվետու ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ,

5.2.3. չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք ծրագրի շահառուի համար կրում են անձնական կամ գաղտնի բնույթ և որոնց մասին շահառուն տեղեկացրել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

5.3. Պատվիրատուն իրավունք ունի.

5.3.1. Կատարողից պահանջելու մատուցել Պայմանագրի 2.2-րդ կետով նախատեսված ծառայությունները պատշաճ որակով՝ ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան,

5.3.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա ավարտը Կատարողից պահանջելու ներկայացնել հաշվետվություն հաշվետու ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ,

5.3.3. անհրաժեշտության դեպքում պահանջել Կատարողից հիմնավորել ներկայացված հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր և հիմնավորումներ ներկայացնելու միջոցով,

5.3.4. միակողմանի լուծել Պայմանագիրը՝

5.3.4.1. եթե Կատարողը խախտել է Պայմանագրի էական պայմանները,

5.3.4.2. եթե Կատարողի մատուցված ծառայությունները չեն համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

5.3.4.3. հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

5.3.5. իրացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

5.4. **Պատվիրատուն պարտավոր է.**

5.4.1. Ծրագրով նախատեսված ժամկետներում Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել ծրագրի շահառուների ցուցակը՝ բացառությամբ Պայմանագրի 5.1.1. կետով սահմանված դեպքերի,

5.4.2. Ծրագրով սահմանված չափերով, պայմաններով և ժամկետներում Կատարողին վճարելու ֆինանսական միջոցներ Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու դիմաց,

5.4.3. առնվազն եռամսյակը մեկ անգամ իրականացնել Կատարողի կողմից ծառայությունների մատուցման մոնիթորինգ և արդյունքների մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

5.4.5. չհրապարակել և/կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք Կատարողի համար կրում են անձնական կամ գաղտնի բնույթ և որոնց մասին Կատարողը տեղեկացրել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

5.4.6. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագիրը գործում է մինչև Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ավարտը:

8.2. Պայմանագրում փոփոխությունները և լրացումները կատարվում են Նախարարի հրամանով Պայմանագրում փոփոխություն կատարելու միջոցով, որը հրապարակվում է Պատվիրատուի պաշտոնական կայքում և որի մասին Պատվիրատուի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով (դիմումի մեջ (ակցեպտում) նշված էլեկտրոնային փոստի հասցեով) ծանուցվում են Ցանկում ներառված բոլոր կազմակերպությունները: Կատարողի կողմից ծանուցումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում փոփոխությունը համարվում է ընդունված:

9. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Հասցե՝ Հայաստան, 0010, Երևան, Նալբանդյան փող., 13 շենք
ՀՎՀՀ `02505511
Ի դեմս գլխավոր քարտուղար՝ Դավիթ Մելիքյանի
Ստորագրող ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ 4009900954 2026-03-12 19:22:20 GMT+4 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից (ստորագրություն)
«12» մարտ 2026 թ.
Հեռ՝ 060654012 էլ. փոստի հասցե ՝ info@socservice.am